

1954-Ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղեմէն

Գեր. Տ. Սուրբէն Եպո. Բէմհանճեան՝
Ուրարակիր Տիր. Յովսէփ Մամուր՝

Տօքթ. Լ. Համբարձումեանին (Փարիզ),
Կարտինալ Էօթէն Թիսէրանթի (Հռոմ),

Ամմանէն

Տիար Սեդրաք Լափանճեան՝

Հոգ. Տ. Արտաւազդ Արզ. Թրթրեանի
(Անթիլիաս),

ՎԱՍՆ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ «ՍԻՈՆ»Ի

Սան Սալվատորէն, Մեծ. Տիար Էլիաս Պանահա, կը նուիրէ 250 միլի
վասն բարգաւաճման «Սիոն»ի:

Կը յայնմեմ մեր ջերմ շնորհակալութիւնները մեծայարգ նուիրատւին:

Վարչութիւն «Սիոն»ի

Աւատի, կոչ կ'ընենք ձեզի, Պր. Նախագահ, որ յետս կոչէք Միացեալ Նահանգաց անարգար
ու վտանգաւոր քաղաքականութիւնը, որով անոր զինական ուժի օժանդակութիւնը կը տրուի
հրէշային շարիքին, որ ոչ միայն միլիոնաւոր Հայեր զրկեց իրենց կեանքէն, այլև վերապրողներէն
խից նաև իրենց երկրի ինը տասներորդը:

Ամերիկայի համար միակ շիտակ ճամբան, միակ ճամբան որ խաղաղութիւն և տեական բար-
գաւաճում ու երջանկութիւն պիտի բերէ մեր ժողովուրդին և աշխարհի ժողովուրդներուն, արդա-
րութեան և մարդասիրութեան ճամբան է: Հայերու պարագային՝ ատիկա պիտի նշանակէ վերա-
դարձը վերոյիշեալ Հայկական դաւառներուն: Կը հաւատանք թէ մենք կը խօսինք դարբնու մեծ
մարդարէներուն և պետական մեծ մարդոց համարիտ տեսիլքովը, ինչպէս նաև անցեալ 300 տարի-
ներու մեր զեմորդատական աւանդութեանց ոգիովը, որոնք Ամերիկան հասցուցին իր օրհնութեան
դադաթնակէտին և մինչև 1947 թուի գարնան թրքանպատ քաղաքականութեան ընդդրկումը, զայն
զարժուցին աշխարհի մէջ մեծապէս յարգուած ու սիրուած երկիր մը: Միայն հինգ տարի առաջ,
20.000 թողքական եկեղեցականներ կոչ ըրին մեր կառավարութեան, որ իր նեղինականութեամբ ձայնը
լսելի դարձնէ Միացեալ Ազգաց Կազմակերպութեան մէջ, անոր ներկայացնելով և ջատագովելով
Հայ ժողովուրդի արդար պահանջները: Անոնց ստորագրած կոչը կը գտնուի մեր պետական Քար-
տուղարութեան զիւանատան մէջ: Այդ թուղթը կը ներկայացնէ Ամերիկայի հարազատ ձայնը:

Կը յուսանք, Պր. Նախագահ, թէ Պր. ձեզի Պայարի այցելութիւնը պիտի օգտագործէք,
սկիզբը զնելով մեր արտաքին քաղաքականութեան մէջ նոր դարձակէտի մը, վերանորոգելով գոր-
ծօն ջատագովումը Հայ ժողովուրդի արդար զատին, ժողովուրդ մը՝ որ աւելի քան հարիւր տարի
վայելեց Ամերիկեան ժողովուրդի համակրութիւնն ու բարեկամութիւնը, և պիտի առաջնորդէք մեզ
ամէնքս արդարութեան, մարդասիրութեան և տեական խաղաղութեան ճամբով:

Զերգ Զարգան քննելով

Ի դիմաց Ամերիկեայ Ազգային Խորհուրդին

ՕԳՄԷՆ ՍԱՐԵԱՆ

ԱՐԵԱԻՐ ԵԱՄԷԼԱՆ

Ասեմալպէս

Քարտուղար

ԵԶԵԼԻ Կ. ԱԶՆԱԿԵԱՆ

ՏԳՈՐԷՆ